

**ՀՀ սփյուռքի նախարարության 2012թ ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորված  
ծախսերի վերաբերյալ**

«ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.

**1.<<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով>>** (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 05) ծրագրով նախատեսվել է 160105.70 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 160105.70 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 153939.50 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը կազմել է 144409.00 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 15696.70 հազ. դրամը տարեվեջին վերադարձվել է պետական բյուջե: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 153806.10 հազ. դրամ: 2012 թվականի դրամարկղային ծախսը 2011 թվականի համեմատ նվազել է 9397.10 հազ. դրամով կամ 6.50 %-ով, որը պայմանավորված է 2012 թվականին նախարարության աշխատակազմի առկա թափուր հաստիքների, գնման մրցույթների և առանձին ծախսային հոդվածների գծով ձեռնարկված միջոցառումների արդյունքում առաջացած տնտեսմամբ:

**2.<<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարների աշխատակազմերի մասով>>** (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 04) ծրագրով նախատեսվել է 53747.80 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 53747.80 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 49347.10 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 45696.60 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 8051.20 հազ. դրամը տարեվեջին վերադարձվել է պետական բյուջե: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 51068.30 հազ. դրամ, 2012 թվականի դրամարկղային ծախսը 2011 թվականի համեմատ նվազել է 5371.70 հազ. դրամով